Արամ Իսաբեկյան. «Վարչապետի հետ մտահոգություններ ենք «կիսել», ուրիշ բան չի եղել» - թերթ, «Առավոտ», Ե., 16.09.2015

Ի թիվս այլ մտավորականների, Գեղարվեստի ակադեմիայի ռեկտոր, գեղանկարիչ Արամ Իսաբեկյանը եւս մասնակցել է օրերս Պռոշյանի տուն-թանգարանում վարչապետ Հովիկ Աբրահամյանի հետ կայացած հանդիպմանը: Aravot-ը պարոն Իսաբեկյանից հետաքրքրվեց՝ ի՞նչ տպավորություն է ստացել այդ հանդիպումից եւ ի՞նչ ուղերձ ուներ այն: «Գնահատելի է, որ վարչապետը ցանկանում է հանդիպել մտավորականների, արվեստագետների հետ եւ մեր կյանքի անցուդարձի վերաբերյալ իրենց կարծիքն իմանալ ու մտահոգությունները «կիսել»: Դա էր ամբողջը, ուրիշ բան չի եղել»,- պատասխանեց Արամ Իսաբեկյանը: Հարցրինք՝ օրինակ ինքը որպես Գեղարվեստի ակադեմիայի ռեկտոր, իրենց բուհի վերաբերյալ որեւէ հարց ուղղե՞լ է վարչապետին: «Այդպիսի հանդիպում չէր, որ ամեն մեկը իր դարդուցավը պատմեր, ուղղակի առիթ էր ժողովրդի, երիտասարդության, մշակույթի մասին խոսելու»,-ասաց մեր զրուցակիցը: Մեր դիտարկմանը, թե որոշ մտավորականների շրջանում կարծիք կա, որ Պռոշյանի տուն-թանգարանում կայացած հանդիպումը ինչ-որ տեղ նաեւ մշակույթի նախարար Հասմիկ Պողոսյանի հրաժեշտի առիթով հավաքույթ էր, Գեղարվեստի ակադեմիայի ռեկտորը չհամաձայնեց: «Նման տպավորություն չեմ ստացել, նման հարց չի եղել եւ առաջին անգամ եմ լսում»,-ասաց Արամ Իսաբեկյանը: Կարդացեք նաև Առայժմ մենք չենք տեսել, թե նախարարությունն ինչ է արել այս ուղղությամբ, որպեսզի աղբը վերանա մեր էկրաններից. «Չորրորդ իշխանություն» Օպերային երգիչը՝ օպերայում ռեստորան ունենալու մասին. «Շատ երկրներում ռեստորանից օգտվելու հնարավորությունը ներառված է տոմսի արժեքի մեջ» Արմեն Ամիրյանը՝ օպերայում ռեստորան հիմնելու մասին. «Կոչ եմ անում ծայրահեղական մոտեցում չցուցաբերել»:

Գոհար ՀԱԿՈԲՅԱՆ

https://www.aravot.am/2015/09/16/609349/